



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ**

(հասցեն՝ ք. Երևան, Ջաքյան 7-2, 4-րդ հարկ, հեռ՝ 600701, 600702 (ներքին համար՝ 108),  
էլ. հասցե՝ info@advocates.am)

**ԾԱՆՈՒՑՈՒՄ**

(կողմերի իրավունքների և պարտականությունների  
պարզաբանման մասին)

«\_\_\_» \_\_\_20\_\_\_թ.

Կարգապահական գործ № \_\_\_\_\_

\_\_\_\_\_

ծանուցվող անձի անունը, ազգանունը

\_\_\_\_\_

ծանուցվող անձի հասցեն

**Հարգելի պարոն/տիկին \_\_\_\_\_,**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը (այսուհետ՝ **Պալատ**) տեղեկացնում է Ձեզ, որ ՀՀ փաստաբանների պալատի նախագահի .....թ. թիվ ....-Ա որոշմամբ փաստաբան .....-ի (այսուհետ՝ **Պատասխանող**) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ «Փաստաբանության մասին» օրենքի 19 հոդվածի 2-րդ կետի և Պալատի ընդհանուր ժողովի 19.10.2019թ. թիվ 1-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (այսուհետ՝ **Կանոնագիրք**)..... կետ(եր)ի խախտման հատկանիշներով:

Կարգապահական գործով նախապատրաստող անձ է նշանակվել փաստաբան .....-ը (այսուհետ՝ **Նախապատրաստող**):

Ստորև ներկայացվում են ընդհանուր պարզաբանումներ կարգապահական վարույթի իրականացման ընթացքում Ձեր իրավունքների և պարտականությունների, ինչպես նաև ապացույցների և ապացուցման վերաբերյալ:

**I. Իրավունքների և պարտականությունների վերաբերյալ.** Կանոնագրքի հավելվածը հանդիսացող Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի (այսուհետ՝ Կարգ<sup>1</sup>) 1.9-րդ կետի համաձայն՝

**1.9.1 Կողմերը սույն օրենքով սահմանված կարգով հավասար իրավունքներ ունեն**<sup>1</sup>

1) մասնակցելու կարգապահական վարույթի բոլոր փուլերին ինչպես անձամբ, այնպես էլ ներկայացուցչի միջոցով.

2) կարգապահական վարույթի հարուցման պահից ծանոթանալու կարգապահական գործի բոլոր նյութերին, դրանցից պատճեններ հանելու և գործից դուրս գրելու ցանկացած ծավալի որևէ տեղեկություն.

3) տալու բացատրություններ կամ հրաժարվելու բացատրություններ տալուց.

4) ներկայացնելու ապացույցներ կարգապահական գործին կցելու և հետագոտելու համար.

5) հայտնելու բացարկներ փաստաբանների պալատի խորհրդի անդամներին և գործը նախապատրաստող անձանց.

6) հարուցելու միջնորդություններ.

7) հրավիրելու վկաներ, հարցեր տալու ինչպես իր, այնպես էլ մյուս կողմի կամ փաստաբանների պալատի խորհրդի հրավիրած վկաներին.

8) հարցեր տալու ելույթ ունեցողին.

9) հանդես գալու եզրափակիչ ելույթով.

10) ստանալու փաստաբանների պալատի նախագահի և փաստաբանների պալատի խորհրդի որոշումները.

11) դատական կարգով բողոքարկելու փաստաբանների պալատի նախագահի և փաստաբանների պալատի խորհրդի որոշումները:

**1.9.2. Կարգապահական վարույթի ընթացքում կողմերը պարտավոր են՝**

ա) զերծ մնալ միմյանց նկատմամբ պատիվն ու արժանապատվությունը նսեմացնող արտահայտություններ անելուց կամ գործողություններ կատարելուց,

բ) հարգալից վերաբերվել միմյանց, ինչպես նաև՝ Պալատի խորհրդի անդամների և Նախապատրաստողի նկատմամբ,

գ) Պալատի խորհրդի նիստերին ներկա գտնվելու ընթացքում, պահպանել կարգ ու կանոն, ենթարկվել նիստը նախագահողի օրինական կարգադրություններին:

**1.9.3. Պատասխանողը պարտավոր է՝**

ա) Նախապատրաստողի պահանջով ներկայացնել գրավոր բացատրություններ,

բ) Նախապատրաստողի եզրակացությունը ստանալու օրվանից տասնօրյա ժամկետում Պալատի խորհրդին ներկայացնել գրավոր առարկություններ, եթե ամբողջովին կամ մասամբ համաձայն չէ Նախապատրաստողի եզրակացության հետ: Առարկությունների մեջ Պատասխանողը պարտավոր է նշել իր փաստարկները Նախապատրաստողի եզրակացության մեջ տեղ գտած փաստերի և ապացույցների գնահատականի վերաբերյալ: Սույն հոդվածով սահմանված ժամկետում գրավոր առարկություններ չներկայացնելը Պալատի խորհուրդը կարող է որակել, որպես Պատասխանողի կողմից Նախապատրաստողի եզրակացության ընդունում:

**II. Ապացույցների և ապացուցման վերաբերյալ.** Կարգի 3.2.2 ենթակետի համաձայն կարգապահական գործով ապացույցներ են հանդիսանում կողմի

<sup>1</sup> Կարգը կարող էք բեռնել Պալատի [www.advocates.am](http://www.advocates.am) կայքէջից՝ «Իրավական ակտեր» բաժնում:

բացատրությունը, վկայի ցուցմունքը, փորձագետի ցուցմունքը, գրավոր փաստաթղթերը, իրեղեն ապացույցները (այդ թվում՝ լուսանկարները), ինչպես նաև ձայնագրություններն ու տեսագրությունները:

### **Կարգի 3.3 կետի համաձայն՝**

3.3.1 Կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

3.3.2 Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է Նախապատրաստողը: Պալատի խորհուրդը կաշկանդված չէ Նախապատրաստողի դիրքորոշումով և կարող է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերի շրջանակը փոփոխել:

3.3.3 Եթե կողմը հրաժարվում է (խուսափում է) պատասխանել Նախապատրաստողի հարցերին կամ բացատրություններ տալ, ապա Նախապատրաստողը մյուս կողմի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ կարող է անհիմն համարել կողմի հրաժարվելը (խուսափելը) պատասխանից և բացատրություններից, իսկ գործի այն փաստական հանգամանքները, որոնց վերաբերյալ կողմը հրաժարվում (խուսափում) է բացատրություն կամ պատասխան տալուց, կարող է համարել ապացուցված: Ամեն դեպքում պատասխանից կամ բացատրությունից Նախապատրաստողի կողմից որպես անհիմն գնահատված հրաժարումը (խուսափումը) մեկնաբանվում է ի վնաս հրաժարվողի (խուսափողի): Սույն կանոնը կարող է կիրառել նաև Պալատի խորհուրդը:

3.3.4 Կողմերից յուրաքանչյուրը մինչև Նախապատրաստողի կողմից եզրակացություն տալը պարտավոր է մյուս կողմի առջև բացահայտել տվյալ պահին իրեն հայտնի այն ապացույցները, որոնց վրա նա հղում է կատարում որպես իր պահանջների կամ առարկությունների ապացուցման հիմք, եթե այլ բան նախատեսված չէ Կարգով:

3.3.5 Եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

3.3.6 Նախապատրաստողի կողմից եզրակացություն տալուց հետո մինչև Պալատի խորհրդի կողմից որոշում կայացնելը կողմի ներկայացրած լրացուցիչ ապացույցը Պալատի խորհրդի կողմից կարող է ընդունվել միայն այն դեպքում, երբ դրանք ներկայացնողը հիմնավորում է մինչև Նախապատրաստողի եզրակացության տրման օրը ապացույցի ներկայացման անհնարիությունը՝ իրենից անկախ պատճառներով: Բացառիկ դեպքերում, Պալատի խորհուրդը կարող է հետաձգել գործի քննությունը և լրացուցիչ ապացույցներ պահանջել կողմերից կամ այլ անձանցից:

*Առդիր՝ Պալատի նախագահի որոշման բնօրինակը՝ \_\_\_\_\_ էջից:*

ՀՀ փաստաբանների պալատի  
աշխատակազմի ղեկավար՝ \_\_\_\_\_